Ո՞վ է Հիսուսը

Ներածություն

Կողոսիայի եկեղեցին անթիվ հարձակումների էր ենթարկվում սուտ ուսուցիչներից: Աստվածաբանները տարակարծիք են այն մասին, թե ի՛նչ բնույթ էր կրում Կողոսիայի հերձվածությունը (կամ հերձվածությունները): Այդ հերձվածության դեմ պայքարելու միջոցը ոչ թե բանավեճերն են, այլ հռչակումն այն մասին, թե ո՛վ է Հիսուս Քրիստոսը և ի՛նչ է Նա կատարել Իր մահվան և հարության միջոցով: Կողոսացիների 1:15-20-ում Պողոսի գրեց Քրիստոսի Անձի և Նրա կատարած գործի ամենախոր ամփոփումներից մեկը: Այս խոսքերի միջոցով նա հերքեց սուտ ուսուցիչների փաստարկները, և թե՛ Կողոսիայի քրիստոնյաներին, թե՛ մեզ ավելի հիմնավոր պատճառներ ներկայացրեց Հիսուս Քրիստոսին որպես Աստված երկրպագելու և մեծարելու համար: Այս հատվածում մենք տեսնում ենք Քրիստոսի կապն Աստծո, արարչագործության և նոր ստեղծագործության հետ:

Սուրբգրային հատված - Կող. 1:15-20

Քրիստոսն ինքը տեսանելի պատկերն է աներևույթ Աստծու, անդրանիկը ծնված բոլոր ստեղծվածներից առաջ: 16 Որովհետև նորանով ամեն բան ստեղծվեց ամեն բան երկնքում թե երկրի վերա, երևալի և աներևույթ, թէ գահակալներն, թէ տէրութիւնները, թէ պետութիւնները, ու իշխանութիւնները. Նրա ձեռքով և Նրա համար ստեղծուեց ամեն ամեն ինչ: 17 Նրա գոյութիւնն ամեն բանից առաջ է, և ամեն բան նրանով է գոյացել: 18 Նա է գլուխը մարմնի, որ եկեղեցին է: Նա է սկիզբը, որ անդրանիկ ծնուածը եղավ մեռելներից, որպեսզի ինքն առաջնութիւնն ունենա ամեն բանի մեջ. նա է սկիզբը, մեռելների անդրանիկը. որպէսզի ամեն բանի մէջ նա լինի առաջինը: 19 Քանզի Հայրն ուզեց, որ Քրիստոսն իր մեջ ունենա լիյութիւնն Աստվածային բնութեան: 20 Նրա ձեռքով ուզեց իր հետ հաշտեցնել ամեն բան երկնքում թե երկրի վրա խաղաղութիւն հաստատելով խաչի վրա նրա մահվամբ:

ԿՈՂՈՍԱՑԻՆԵՐԻ 1:15-20-Ը ԹՎԱՐԿՈՒՄ Է ՔՐԻՍՏՈՍԻ ՅՈԹ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԸ:

I. Քրիստոսն ինքը տեսանելի պատկերն է աներևույթ Աստծու (խս. 15):

II. Նա անդրանիկն է ծնված բոլոր ստեղծվածներից առաջ (խս. 15):

III. Նորանով ամեն բան ստեղծվեց (խս. 16):

IV. Նա է գլուխը մարմնի, որ եկեղեցին է (խս. 18):

V. Նա է սկիզբը, որ անդրանիկ ծնուածը եղավ մեռելներից (խս. 18):

VI. Նա իր մեջ ունի լիյությունն Աստվածային բնության (խս. 19):

VII. Նրա միջոցով, Հայր Աստված ուզեց իր հետ հաշտեցնել ամեն բան (խս. 20):

Բառերի ուսումնասիրություն

εἰκών, eikōn, - an image, figure, likeness, **էյկոն**, **էյ-կո-ն** – պատկեր, կերպարանք, նմանություն՝ իրողությունների (երկնային իրողությունների) պատկերը:

1. Քրիստոսն ինքը տեսանելի պատկերն է աներևույթ Աստծու (խս. 15):

Պողոսը գրում է, որ Քրիստոսն «աներևույթ Աստծո պատկերն է» (խս. 15): Այս խոսքում Պողոսն ի նկատի չունի Քրիստոսի ֆիզիկական կերպարանքը, այլ Նրա բնավորությունը և էությունը:

צֶלֶם - idol; statue, inscribed column; image, figure, replica, likeness
5 անգամ միայն Ծննդոց գրքում է նշված (Ծննդոց 1:26, 27, 5:3, 9:6) - צֶלֶם - idol; statue, inscribed column; image, figure, replica, likeness

Ծննդոց 1-ում գրված է, որ Աստված ստեղծեց մարդուն Իր պատկերով (խս. 27-28), որպեսզի նա արտացոլեր Իր բնավորությունը և էությունն այս աշխարհին: Այնուամենայնիվ, մեղքը խափանեց Աստծո մտադրությունները մարդու համար: Ոչ ոք չի կարող կատարելապես հայտնել Աստծուն: Բայց երբ Աստծո Որդին մուտք գործեց այս աշխարհ, Նա կատարելապես հայտնեց Աստծո բնավորությունը և փառքը: Հավանաբար, սուտ ուսուցիչները Կողոսիայում սովորեցնում էին, որ միայն Քրիստոսին ունենալը բավական չէ փրկություն ստանալու համար: Պողոսը հավաստիացրեց նրանց, որ Քրիստոսը բավական է:

Եթե ցանկանում եք իմանալ, թե ինչպիսի՛ն է Աստված, նայեք Հիսուսին: Երբ այսպես վարվենք, մենք չենք փորձի ընկալել Աստծուն մեր պատկերով: Մեր ներսում մենք հակված ենք ձևավորել Աստծուն ըստ մեր մտքերի և ցանկությունների: Մենք փորձում ենք սեղմել Նրան՝ վերածելով ինչ-որ կաղապարի, և ներկայացնել Նրան այնպես, ինչպիսին Նա չէ:

> Ջեյ Այ Փաքերը գրում է. «Քրիստոնեական մտքերը կերպարանափոխվել են ըստ մեր օրերի հոգու, որը սերում է մեծ մտքեր մարդու մասին, բայց շատ քիչ տեղ է թողնում այն մտքերի համար, որոնք Աստծո մասին են»: Հիսուսը հսկում է մեր պատկերացումն Աստծո մասին:

Գործնական կիրառություն.

Կարդացե՛ք Հիսուսի կյանքի մասին Ավետարաններում: Մտորե՛ք այն մասին, թե ի՞նչ Նա արեց Իր մահվան և հարության միջոցով: Քննարկե՛ք այլ քրիստոնյաների հետ Քրիստոսի հրաշալի և սքանչելի էությունը: Երգե՛ք Նրան՝ գոհանալով մեր հանդեպ ունեցած Նրա մեծ սիրո և շնորհքի համար:

2. Նա անդրանիկն է ծնված բոլոր ստեղծվածներից առաջ: (խս. 15-17):

Հրեշտակը պատասխանեց և ասեց նորան. Սուրբ Հոգին կ'գայ քեզ վերայ, և Բարձրեալի զօրութիւնը քեզ վերայ կ'հովանաւորէ, վասն որոյ և այն ծնուած սուրբն էլ Աստուծոյ Որդի կ'կոչուի: Ղուկ. 1:35

Երբ Պողոսը գրեց այն մասին, որ Հիսուսը «ամեն ստեղծագործությունից առաջ ծնված» է (խս. 15), նա ի նկատի չուներ, որ Աստված ստեղծել էր Հիսուսին, ինչպես ոմանք այսօր պնդում են: Անմիջապես հաջորդ խոսքն ապացուցում է դա. **«Վասնզի Նրանով ամեն բան ստեղծվեց...»** (խս. 16): Այդ դեպքում ի՞նչ ի նկատի ուներ Պողոսը:

Հիսուսն արարված էակ չէ:

Նա Արարիչն է, Ով թագավորում է ողջ ստեղծագործության վրա: Նա է ստեղծել այն ամենը, ինչ գոյություն ունի, և այն ամենը, ինչ Նա ստեղծել է, գոյություն ունի «Նրանով» կամ «Նրա համար» (խս. 17):

Ինչո՞ւ է սա կարևոր:

Ուշադրություն դարձրեք, որ Պողոսը թվարկում է այն, ինչ ստեղծեց Հիսուսը. «թե՛ գահակալներն, թե՛ տէրությունները, թե՛ պետությունները, թե՛ իշխանությունները» (խս. 16):

Պողոսը ցանկանում էր պարզորեն ցույց տալ, որ երկնքում և երկրի վրա գտնվող բոլոր իշխանությունները Հիսուս Քրիստոսի տիրապետության ներքո են:

> Աբրահամ Կայպերն ասաց. «Չկա նույնիսկ մեկ քառակուսի սանտիմետր ողջ արարչագործության մեջ, որը Քրիստոսն Իրենը չի հռչակում»: Հիսուսը պահում, կառավարում և պահպանում է ամեն ինչ, և իշխում է ամեն ինչի վրա (խս. 17): Սա ցնծություն է պատճառում մեզ:

Գործնական կիրառություն.

Արդյո՞ք դուք վստահում եք Քրիստոսին ձեր կյանքի բոլոր բնագավառները: Ձեր կյանքի ո՞ր ոլորտները դուք լիովին չեք ցանկանում հանձնել Նրան:

3. Նորանով ամեն բան ստեղծվեց (խս. 16):

Ամեն ինչ նորանով եղաւ, և առանց նորան ոչինչ չեղաւ, ինչ որ եղաւ: Հով. 1:3

Այս վերջի օրերումը խօսեց մեզ հետ Որդովը, որին ամեն բանի ժառանգ դրաւ, որով աշխարհքն էլ արաւ. 3 Որ նորա փառքի լոյսը լինելով և նորա էութեան նկարագիրը, որ իր զօրութեան խօսքովն ամեն բան կրում է՝ մեր մեղքերի սրբութիւնն իրանով անելուց յետոյ նստեց Աստուծոյ մեծութեան աջ կողմը բարձունքներումը: Եբր. 1:2-3

4. Նա է մարմնի այսինքն եկեղեցու գլուխը (խս. 18):

18 Եւ նա է մարմնի այսինքն եկեղեցու գլուխը, որ նա է սկիզբը, մեռելների անդրանիկը. որպէսզի ամեն բանի մէջ նա լինի առաջինը: **19** Որովհետև Աստուած հաճեց, որ նորանում Աստուածութեան բոլոր լիութիւնը բնակուի: **20** Եւ նորանով ամենը հաշտեցնէ իրան հետ, խաղաղութիւն անելով նորա ձեռովը նորա խաչի արիւնովը, թէ երկրիս վերայ թէ երկնքում լինողներին:

Քրիստոսը ոչ միայն վեր է արարչագործությունից, այլև նոր ստեղծագործությունից՝ Եկեղեցուց: Նա եկեղեցու գլուխն է (խս. 18): Դարեր շարունակ Տիեզերական եկեղեցին, ինչպես և ամեն տեղական համայնք, որի հավատացյալները դավանում են Քրիստոսին որպես Տեր,

կառավարվում է Նրա կողմից: Քրիստոսը ձեռք բերեց այս կարգավիճակն Իր մահվան և հարության միջոցով, որովհետև Նա «մեռելների անդրանիկն» է (խս. 18): Նա վերցրեց արարչագործության անեծքն Իր վրա (Գաղատացիների 3.13), որպեսզի ծնունդ տար նոր ստեղծագործությանը և «ամենը հաշտեցնի Իր հետ՝ խաղաղություն անելով Նրա ձեռով, Նրա խաչի արյունով» (խս. 20): Արարչագործությունը հառաչում է՝ ձգտելով ազատ արձակվել և լիովին մուտք գործել այն խաղաղության մեջ, որը Քրիստոսը ձեռք է բերել (Հռոմեացիների 8.19-23):

5. Նա է սկիզբը, որ անդրանիկ ծնուծդը եղավ մեռելներից (խս. 18):

Jesus' resurrection is the cornerstone of the Christian faith, the reason that the church even exists.

Բայց հիմա Քրիստոսը յարութիւն է առել մեռելներից, ինքը ննջածների առաջինեկ եղաւ: 1 Կոր. 15:20

Որովհետև սա ենք ասում ձեզ Տիրոջ խօսքովը, թէ մենք որ կենդանի մնացած ենք մինչև Տիրոջ գալը, ննջեցեալներիցը չենք առաջանալ: Որովհետև ինքը Տէրը հրամանով, հրեշտակապետի ձայնով և Աստուծոյ փողով վայր կ'գայ երկնքիցը. և Քրիստոսով մեռելներն առաջ յարութիւն կ'առնեն, Եւ յետոյ մենք, որ կենդանի ենք մնացած նորանց հետ մէկտեղ ամպերով օդի մէջ կ'յափշտակուինք Տիրոջը դիմաւորելու և այնպէս ամեն ժամանակ Տիրոջ հետ կ'լինինք: Ուրեմն իրար մխիթարեցէք այս խօսքերովը: 1 Թես. 4:14-17

6. Նա իր մեջ ունի լիությունն Աստվածային բնության (խս. 19):

Նա Ամենակարող է, ամենուր է և ամենագետ Աստված է: Աստվածաշունչը վկայում է այս մասին, Հին և նոր կտակարաններում:

7. Նրա միջոցով, Հայր Աստված ուզեց իր հետ հաշտեցնել ամեն բան (խս. 20):

Ուրեմն եթէ մէկը Քրիստոսումն է՝ նոր ստեղծուած է. հինները անցան, ահա ամեն բան նոր եղաւ: 18 Բայց այն ամենն Աստուածանից է. որ մեզ իրան հետ հաշտեցրեց Յիսուս Քրիստոսի ձեռովը. և մեզ հաշտութեան պաշտօնը տուաւ: 19 Որովհետև Աստուած էր Քրիստոսումը որ աշխարհքը հաշտեցրեց իրան հետ, և նորանց յանցանքները չհամարեց նորանց և հաշտութեան խօսքը մեր միջումը դրաւ: 2 Կոր. 5:17-19

Գործնական կիրառություն. Միգուցե դուք պարզեցիք որ հենվում եք ձեր գործերի և բարոյականության վրա՝ փրկություն ստանալու համար: Ինչո՞ւ է Քրիստոսի մեջ հանգիստ գտնելը դժվար մեզ համար: Արդյո՞ք կնայեք Նրա կատարած գործին և կվստահեք Նրան՝ փրկություն ստանալու համար:

Ամփոփում

Հիսուս Քրիստոսն Աստված է: Այն, թե ո՛վ է Նա, ի՛նչ է Նա կատարել և ի՛նչ ապագա է սպասում մեզ դրա շնորհիվ, պետք է դրդի մեր սրտերը սավառնել երկրպագության մեջ: Հիսուսն

անզուգական է: Ջոն Փայփերը հաճախ ասում է. «Աստված առավելագույնս փառավորվում է մեզանում, երբ մենք առավելագույնս բավականություն ենք ստանում Նրանում»: Հիսուս Քրիստոսի մեջ անսահման բավականություն կա: Թող որ մենք գտնենք մեր բավականությունը Նրանում, որ փառավորենք Նրա Անունն ամեն ինչում: